ԿԱՏԱՐՎԵՑ ԱՐԱԿՈՎԱՅԻ Ս. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱՕԾՈՒՄԸ

2006 թվականի հոկտեմբերի 28-ին Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ և բարձր տնօրինությամբ, Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի ձեռամբ և մասնակցությամբ Սամցխե-Ջավախքի ընդհանուր առաջնորդական փոխանորդ Տ. Բաբգեն աբեղա Սալբիյանի, Բաթումիի և Աջարիայի հայության հոգևոր հովիվ Տ. Կիրակոս աբեղա Դավթյանի, տեղի քահանայաց դասի, վերաօծվեց Ախալքալաքի շրջանի Արակովա գյուղի Սուրբ Գևորգ հայոց եկեղեցին:

Նշենք, որ եկեղեցին հիմնադրվել է դեռ 1830-ականներին: 1877-ին այն հիմնովին վերակառուցվել է Տ. Գրիգոր քահանա Տեր-Ավետիսյանի միջոցներով և ճարտարապետ Գրիգոր Կիրակոսյանի նախագծերով: Եկեղեցին իր ժամանակի աչքի ընկնող շինություններից է եղել: Այն կանգնած էր 12 սյուների վրա, որոնց վրա դրոշմված էին առաքյալների պատկերները: Արդեն 1890-ականներին եկեղեցին քայքայված վիճակում էր: Վերջապես 1903-ին սկսվեց Սուրբ Գևորգ եկեղեցու շինարարությունը: Աշխատանքներն ավարտվեցին 1905-ին, իսկ վերաօծումը կատարվեց 1909-ին: 1930-ականներին խորհրդային իշխանության որոշումով եկեղեցին փակվեց և վերածվեց պահեստի, իսկ քահանան՝ բռնադատվեց և աքսորվեց:

Այդ օրերից ի վեր եկեղեցին չէր վերանորոգվել և անմխիթար վիճակում էր: Վերջապես, 2000-ի սկզբներին Ջավախքի հոգևոր-եկեղեցական կյանքի վերաաշխուժացմամբ մտահոգ և նույն գյուղում ծնված ՀՀ փոխոստիկանապետ գեներալ-լեյտենանտ Հովհաննես Հունանյանի աջակցությամբ և Արակովայի ազգաբնակչության ջանքերով, վերականգնվեց եկեղեցու փլված գմբեթը, հիմնովին բարեկարգվեց եկեղեցու մերձակա տարածքը:

Սուրբ Գևորգ եկեղեցու վերաօծման արարողությունը սկսվել էր դեռ նախորդ օրը, հոկտեմբերի 27-ի երեկոյան՝ Դռնբացեքի արարողությամբ: «Զողորմութեան Քո զդուռն բաց»8 շարականի երգեցողությամբ հոգևոր դասը, հավատավոր ժողովրդի հոծ բազմության ուղեկցությամբ, մուտք գործեց տաճար և սուրբ ատյանի առջև կատարեց Եկեղեցօրհնության ու Երեկոյան ժամերգության արարողությունները:

Հաջորդ օրը, առավոտյան, ուխտավոր ժողովուրդը հավաքվել էր եկեղեցում և հարակից տարածքներում: Այստեղ էին ՀՀ փոխոստիկանապետեր Արման Մահտեսյանը, Հովհաննես Հունանյանը և Արմեն Երիցյանը, ինչպես նաև Վրաստանի հայերի միության նախագահ և Վրաստանի տնտեսական զարգացման փոխնախարար Գենա Մուրադյանը, Վրաստանի Խորհրդարանի հայ պատգամավորներ, Սամցխե-Ջավախքի նահանգապետ Գոգա Խաչիձեն, տեղական իշխանության ներկայացուցիչներ: Այստեղ էին նաև Վրաստանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Հրաչ Սիլվանյանը, պետական այրեր Հայաստանից և Վրաստանից, հյուրեր ՌԴ տարբեր քաղաքներից:

Վերաօծման կարգը սկսվեց առավոտյան ժամը 11-ին: Հայոց Եկեղեցու ծիսակարգով օծվեցին եկեղեցու 16 սյուները, խորանը, սուրբ սեղանը, մկրտության ավազանը և սրբապատկերները: Հավարտ վերաօծման մատուցվեց Սուրբ և Անմահ Պատարագ: Հընթացս Ս. Պատարագի, պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց: Նա ներկա բազմությանը փոխանցեց Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի օրհնությունը: Առաջնորդի կողմից գնահատանքի և օրհնության արժանացան եկեղեցու վերականգնման գործում զգալի ներդրում կատարած Մերուժան և Ռաֆայել Թութունջյանները, Սարգիս և Ասքանազ Թաթարյանները, Ստեփան Փիլթաքյանը, Սպիրիդոն Բուռնասուզյանը և նորոգության աշխա-

տանքները համակարգած գեներալ-լեյտենանտ Հովհաննես Հունանյանը: Նրանց փոխանցվեց Առաջնորդական Օրհնության Գիր և հուշանվեր՝ Սամցխե-Ջավախքի փոխառաջնորդության կողմից:

Սրբազան արարողության ավարտին կատարվեց նաև եկեղեցու մերձակայքում գտնվող Սուրբ Խաչ մատուռի օրհնությունը, ապա՝ մատաղօրհնության ավանդական արարողությունը, որին հաջորդեց ժողովրդական ուրախ տոնախմբությունը:

ԹԻՖԼԻՍԱՀԱՅ ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Վիրահայոց թեմի Մշակույթի Հանձնախմբի և Թբիլիսիի Մշակութային հարաբերությունների կենտրոն «Կովկասյան տան»8 համատեղ նախաձեռնությամբ ու Վրաստանում ՀՀ դեսպանատան աջակցությամբ, նոյեմբերի 24-ից 26-ը Թբիլիսիում կազմակերպվեց թբիլիսահայ լուսանկարիչների ցուցահանդես: Ներկայացվեցին Եսայի Աբովյանի, Յուրի Ակուլյանի, Յուրի Մեչիտովի, Ազատ Մանուկյանի, Թեմուրի Գևորգյանի, Ալեքսանդր Մամուլովի, Արտյոմ Կիրակոզովի, Ռուբեն Ռուխկյանի և Յուրի Տերտերյանի բազմաբովանդակ աշխատանքները:

Միջոցառմանը օրհնության և գնահատանքի խոսքով հանդես եկան առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, ՀՀ դեսպան Հրաչ Սիլվանյանը, Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Վան Բայբուրթյանը, Մշակույթի հանձնախմբի համակարգող Միքայել Ավագյանը, ճանաչված լուսանկարիչ Յուրի Մեչիտովը, Թբիլիսիում լույս տեսնող «Կավկազսկի ակցենտ»8 պարբերականի գլխավոր խմբագիր Համլետ Զուկակիշվիլին, «Կովկասյան տան»8 հայկական մասի վարիչ Վիկտորիա Մաքսոևան:

Բանախոսները կարևորեցին հատկապես այն, որ Վրաստանի անկախացումից հետո այս նախաձեռնությունն առաջինն էր իր բնույթով: Ներկաների համոզմամբ, Վիրահայոց թեմի կողմից կազմակերպվող նման միջոցառումները կնպաստեն եղած ավանդների շարունակմանն ու զարգացմանը, որովհետև վիրահայ լուսանկարչական արվեստը հնակունք պատմություն ունի և պատշաճ տեղ է գրավում հայ մշակութային կյանքում:

Խրախուսվեց նաև միջոցառման ձևը՝ լուսանկարիչներին միասին ներկայացնելը, որն, անշուշտ, կազմակերպիչների կողմից վիրահայությանը համախմբված տեսնելու ևս մեկ բարի ու արդյունավետ քայլ էր:

Ցուցահանդեսին ներկա էին նաև Վրաստանում Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու առաջնորդ Տ. Զուզեպպե եպիսկոպոս Պազոտտոն, ներկայացուցիչ Վրաստանում Բապտիստական Եկեցեցուց, վիրահայ ճանաչված նկարչուհի Գայանե Խաչատուրյանը, հայ ու վրացի անվանի այլ արվեստագետներ, համայնքային ներկայացուցիչներ:

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ